ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ
համայնք, Գ.ԱՐՋՈՒՏ, Հեռ. 093 19 91 34 ,
arjut.lori@mta.gov.am

N ԳԱ25
06 փետրվար 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից Ձեզ ենք ներկայացնում Արջուտ համայնքի ղեկավարի 2018 թվականի թիվ 01-04 որոշումները:

07.02.2018

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատ. `

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

08.01.2018թ. թիվ 01-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՍՄԻԿ ԳԱԳԻԿԻ ՄԱՑԱԿՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով՝

Որոշում եմ՝

Արջուտի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հասմիկ Գագիկի Մացակյանին (պաշտոնի անձնագրի ծածկագիր՝ 1.2-1) շնորհել համայնքային ծառայության ավելի բարձր դասային աստիճան՝ Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

16.01.2018թ. թիվ 02-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով՝

Որոշում եմ՝

Արջուտ համայնքի 06-019-003-007 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել Արջուտ համայնք, 34 փողոց, թիվ 10 փոստային հասցեն:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

29.01.2018թ. թիվ 03-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով՝

Որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքում հաստատել.

1) Աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի:

2) ԱՌԿ խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի:

2.Խորհրդի անդամներին՝

1)մինչև սույն թվականի մայիսի 15-ը մշակել Լոռու մարզի Արջուտ համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը.

2)մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը իրականացնել համայնքի ԱՌԿ պլանի ճշգրտում:

3.ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալին՝ սույն որոշման 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի ներգրավված յուրաքանչյուր անձի կամ անձանց փոփոխության դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել սույն որոշման փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծ:

4.Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

01.02.2018թ. թիվ 04-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Տիգրան Թորոսյանի դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ կետով, Արջուտ համայնքի ավագանու 01.02.2018թվականի թիվ 03-Ա որոշմամբ և ՀՀ հողերի օգտագործման ժամանակվոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի թիվ 1 եզրակացությամբ՝

Որոշում եմ՝

1.Դադարեցնել Տիգրան Թորոսյանի հետ կնքած 06-019-0105-0151 ծածկագրի 0.325754 հա հողամասի վարձակալության պայմանագիրը:
2.Համայնքի 06-019-0105-0151 ծածկագրի 0.325754 հա հողամասի նպատակային նշանակությունը ջրային ֆոնդից փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման, և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, արդյունաբերական հողերի գործառնական նշանակության՝ ավտոպահեստամասերի արտադրամասի կառուցման նպատակով:
3.Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վանաձորի գրասենյակ՝ նպատակային նշանակությունը փոխելու և վարձակալության նոր պայմանագիր կնքելու նպատակով:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ